# «ՀՀ կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**_________ի 2020 թվականի N ______-Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ**

**ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով` Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի`

- 11-րդ կետը լրացնել նոր բովանդակությամբ 11.1-ին ենթակետով`

«1.1) Հեռավոր կամ խոշորացված համայքներում կրթական գործընթացի արդյունավետության ապահովման նպատակով համայնքներում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունները կարող են կազմակերպվել բնակավայրերից մեկում որպես մեկ հանրակրթական ուսումնական հաստատության և դրա հարակից բնակավայրերում վերջինիս մասնաճյուղերի կազմավորման միջոցով` վարչական միասնական

գործունեության պայմաններում ապահովելով ուսումնական գործընթացի ամբողջական կազմակերպումը բոլոր բնակավայրերում։».

- 41-րդ կետում «առնվազն վեց անդամ» բառերը փոխարինել «առնվազն երկու երրորդը» բառերով.
- 42-րդ կետում «փակ» բառի փոխարեն լրացնել «բաց» բառը.
- 43-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին կետով.

«43.1. Տնօրենի ընտրության ժամանակ սույն կանոնադրության 80-րդ կետի 1.1-ին ենթակետում և 102-րդ կետի 1.1-ին ենթակետում նշված քվեարկության արդյունքները պարտադիր են մանկավարժական և ծնողական խորհուրդների կողմից առաջադրված դպրոցի խորհրդի անդամների համար։ Ծնողական և մանկավարժական խորհուրդների՝ կառավարման խորհրդում առաջադրած անդամները, խորհուրդների կողմից  քվեարկության արդյունքում ձայների հավասարությամբ պայմանավորված՝ տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար տվյալ մրցույթի ժամանակ թեկնածու չառաջադրելու դեպքում, ազատ են իրենց քվեարկության ժամանակ։».

- 78-րդ կետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.
- 79-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին ենթակետով.

«1.1) դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը.».

- 80-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին ենթակետով.

«1.1) քվեարկության միջոցով, դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդին հավանություն տալու,».

- 102-րդ կետի 1-ին ենթակետում «երկու» բառը փոխարինել «երեք» բառով.
- 102-րդ կետից լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին ենթակետով.

«1.1. քննարկում է դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի ներկայացրած զարգացման ծրագիրը և քվեարկությամբ որոշում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի հավակնորդի իր թեկնածուին.».

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։